



ԻՄԱՍՏՈՒՆ ԲՈՒՆ

Թռչանոց ունեցող մարդ մը, պահանջկոտ է քմահաճ կին մը ունէր, որուն մէկ ուզածը երկու չէր ըլլար ու մարդը չէր համարձակէր զինք մերժել:

Օր մըն ալ, այս կինը կ'որոշէ թռչուններու միս համտեսել: Մարդը կը հրամայէ սպասաւորներուն կնոջ փափաքը կատարել: Անոնք ալ ենթարկուելով, թռչուններու զանազան տեսակներ կը բերեն կնոջ: Սակայն կինը չբաւարարուելով, կ'որոշէ նաեւ բուի միս համտեսել: Այս անգամ մարդը կը հրամայէ կռունկին, որպէսզի բուն կանչէ իր մօտ:

Բուն իմանալով կնոջ փափաքը, կ'ըսէ կռունկին.

- Ես ցերեկը չեմ կրնար թռչիլ: Աչքերս չեն տեսներ: Դուն գնա՛, իսկ ես գիշերը կ'երթամ տիրոջ քով:

Կռունկը կը վերադառնայ մարդուն քով եւ կը փոխանցէ բուին խօսքերը:

Գիշերը կ'անցնի, ցերեկն ալ կ'անցնի, բուն չկայ ու չկայ...

Կինը կը զայրանայ ու կը սկսի ամուսնոյն վրայ պռռալ.

- Դուն ի՞նչ տեսակ թռչանոցի տեր ես, որ թռչունները խօսքիդ չեն ենթարկուիր:

- Յիմա՛, շուտո՛վ, սիրելի՛ս,- կը հանգստացնէ մարդը կնոջ,- ան գիշերը կու գայ անպայման: Բայց... գիշերն ալ կ'անցնի, ցերեկն ալ, բուն չկայ ու չկայ...

Պալատին մէջ շփոթ է իրարանցում կը ստեղծուի, ծառաները աչ ու ձախ կը վազվզեն տիրոջ հետ ու մարդ չհամարձակիր կնոջ աչքերուն երեւիլ:

Վերջապէս երրորդ օրը, ուշ գիշերով բուն մարդուն քով կը ներկայանայ: Մարդը զայրոյթով կը հարցնէ.

- Յէ՛յ, դուն ինչպե՛ս կը համարձակիս որոշուած ժամանակին չներկայանալ:

- Առաջին գիշերը, ժողովի մը հանդիպեցայ, տեր իմ, ահա թէ ինչո՛ւ չկրցայ ներկայանալ,- հանգիստ ոճով կը պատասխանէ բուն:

- Ի՞նչ ժողով,- կը հարցնէ մարդը:

- Կը վիճէին, թէ փոթորիկէ մը ետք ինկա՞ծ ծառերուն թիւը աւելի կ'ըլլայ, թե՛ կանգուն մնացածներունը:

- Ի՞նչ է պատասխանը,- հետաքրքրութեամբ կը հարցնէ մարդը:

- Ինկածները աւելի շատ են, տեր իմ,- կը պատասխանէ բուն:

- Ինչո՞ւ,- կը զարմանայ մարդը:

- Որովհետեւ շատ ծառեր կան, որոնք ամբողջութեամբ չեն իյնար, միայն կը խոնարհին, սակայն անոնք ալ ինկած կը համարուին:

- Իսկ երկրորդ օրը ինչո՞ւ չներկայացար,- բարկացած կը հարցնէ մարդը:

- Երկրորդ գիշեր, ուրիշ ժողովի մը հանդիպեցայ, տեր իմ, ուր կը զրուցէին թէ տարուան մէջ գիշերները աւելի շատ են, թե՛ ցերեկները:

- Ե՛ւ...

- Եւ որոշեցին որ գիշերները աւելի են, որովհետեւ երկինքը ամպոտած օրերուն, արեւը կը պահուրտի եւ այդ օրերը գիշեր կը համարուին:

- Լա՛ւ, իսկ այս գիշեր ինչո՞ւ չներկայացար:

- Ձեր պալատէն քիչ մը հեռու ժողովի մը հանդիպեցայ, ուր կը վիճէին թէ երկրագունդի վրայ տղամարդո՞ց թիւը աւելի է, թե՛ կանանց: Ի յայտ եկաւ որ կանանց թիւը աւելի շատ է, որովհետեւ այն տղամարդիկը որ իրենց կնոջ յիմար քմահաճոյքներուն կը հետեւին, տղամարդ չեն համարուիր:

Այս լսելով մարդը կը մտածէ՝ «Ես կնոջս կամքը կատարելով, բազմաթիւ թռչուններ սպանեցի...»:

Եւ այդ օրուընէ ան կ'արգիլէ թռչուն սպանել իր պալատին մէջ, իսկ բոլոր թռչունները կը մօտենան բուին եւ շնորհակալութիւն կը յայտնեն անոր:



ԹԻՒՆ ՊԱՏՐԱՍՏԵՆՆԵՐ՝ ՄԱՐՏԻՆԻ ԱՇԽԱՏԱՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՆԿԱՐԱԾԱՐՈՒՆԵՐ՝ ՈՒՅՅՈՒ ԲԵՐՈՇԵՆՆԵՐ

Տուփիկներուն մէջ գտնուող տառերով կազմէ՛ բառեր, որոնք առնչուած ըլլան ամրան հետ:


Փ	Ո	Ա
	Ո	
Մ		Վ

Ի	Զ	Ա
Ա	Ն	Ա

Բ	Դ	Ճ
Ա	Լ	Ո
Մ	Բ	Ե

Լջնսաճրոց
դոնտոր
փոխօ
:մզղոմոմտոն

Կրնա՞ս լուծել:



է :դոմոմտոն



Գտի՛ր պահուած իրերը եւ գունաւորէ՛ զանոնք:



ՀԱՆԵԼՈՒԿ

Փոքրիկ արտ մը գիտեմ ես, ճերմակ ցորենի պէս
Հոն ցանած եմ սեւուկ հունտ, որ մեր մտքին է սնունդ:

ձի :դոմոմտոն

ԱՐՅԵՍՏԸ ՈՍԿԻ Է

Ժամանակին, կար ու չկար հարուստ թագաւոր մը կար: Այս թագաւորը սովորութիւն մը ունէր, բոլոր պալատականներէն գաղտնի, աղքատի հագուստներ հագած, քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ կը պտտէր, որպէսզի տեսներ թէ ժողովուրդը ինչպէ՞ս կ'ապրի ու ի՞նչ կը խօսի իր մասին:

Օր մըն ալ գիւղի մը մէջ, շա՛տ գեղեցիկ աղջիկ մը կը տեսնէ, այնքա՛ն գեղեցիկ, որ մարդ կը մտածէ՝ «*ո՛չ ուտեմ, ո՛չ խմեմ, միայն իր գեղեցկութիւնը դիտեմ*»:

Այդ օր թագաւորը պալատ կը վերադառնայ եւ անմիջապէս նախարարներէն մէկը կանչելով կը հրամայէ.

- Վաղը, առանց ժամանակ կորսնցնելու, կ'երթաս երէկուան մեր գացած տունը եւ կը յայտնես անոնց որ ԵՍ՝ թագաւորս, իրենց աղջկան հետ ամուսնանալ կ'ուզեմ:

Նախարարը անմիջապէս կը կատարէ թագաւորին հրամանը ու կ'երթայ գիւղացի աղջկան տունը: Երբ կը հանդիպի աղջկան, ինք ալ կը հիանայ անոր գեղեցկութեամբ: Աղջկան հօրն ու մօրը կը պատմէ, թէ ինչպէս թագաւորը գիւղ եկած ու իրենց աղջիկը տեսած է եւ հետը ամուսնանալ կ'ուզէ:

Խեղճ ու աղքատ մարդիկ, չեն կրնար ըմբռնել, թէ ինչպէ՞ս կրնայ ըլլալ որ թագաւորը աղքատ եւ գիւղացի աղջկայ մը հետ ամուսնանալ ուզէ: Բայց երբ նախարարը կը պնդէ, իրենք ալ կը պատասխանեն.

- Է՛հ, եթէ թագաւորին հրամանն է, ուրեմն մենք ալ պետք է ընդունինք:


Յետոյ հայրը աղջկան կը հարցնէ.

- Չաւա՛կս, նախարարը եկած է, որպէսզի քեզի թագաւորին որպէս կին տանի: Ի՞նչ կ'ըսես:

- Թագաւորը ի՞նչ արհեստ ունի,- կը հարցնէ աղջիկը:

Մայրը կ'ըսէ.

- Աղջիկս, այս ինչէ՛ր կը խօսիս դուն: Խենթացե՛ր ես: Թագաւորը ի՞նչ



արհեստ պիտի ունենայ: Ան աշխարհին տերն է: Ի՞նչ կ'ուզէ՛ կ'ընէ: Արհեստը ի՞նչ պիտի ընէ:

- Ո՛չ,- կ'ըսէ աղջիկը,- Իմ ամուսինս պետք է արհեստ մը գիտնայ: Ես անարհեստ մարդու մը կինը չեմ ուզեր ըլլալ:

Ի՞նչ ընէր նախարարը... ստիպուած կ'երթայ եւ լսածը թագաւորին կը պատմէ:

Թագաւորը շատ կը զարմանայ ու կը մտածէ թէ ի՞նչ արհեստ կրնայ սորվիլ, որ դիրին ըլլայ եւ սիրուն աղջկան սիրտը շահի: Արագ որոշում կ'առնէ եւ գորգ հիւսել կը սորվի:

Երբ արդէն շատ լաւ սորված էր, գեղեցիկ գորգ մը կը հիւսէ եւ կը դրկէ իր նշանածին, որպէս նուէր:

Գեղեցիկ աղջիկը շատ կը հաւնի թագաւորին հիւսած գորգը: «Մնա՛ք բարով» կ'ըսէ իր հօրն ու մօրը եւ նախարարներուն հետ միասին կ'երթայ թագաւորին մօտ:

Թագաւորը եօթ օր եօթ գիշեր հարսանիք կ'ընէ եւ իր գեղեցիկ կնոջ հետ փառքով ու պատուով կ'ապրին:

Մէկ թէ երկու տարի կ'անցնի, թագաւորը կը յիշէ իր հին սովորութիւնը, ու առաջուան պէս կը սկսի աղքատի հագուստներով քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ պտտիլ, որպէսզի տեսնէ թէ ժողովուրդը ինչպէ՞ս կ'ապրի ու իր մասին ի՞նչ կը խօսի:

Օր մըն ալ այսպէս պտտած ատեն, վատ մարդոց կը հանդիպի, որոնք զինք բռնի ուժով իրենց հետ կը տանին:

(Շարունակելի)

ԱՂՈՒԷՍ



Աղուէսը 13 - 16 տարի ապրող կենդանի է: Անկա ճերմակ, սեւ կամ մոխրագոյն կ'ըլլայ: Ան իր ընկերութիւնները յաւիտեան պահող կենդանի է:

Ս ն ու ն դ ս տ ա ն ա լ ու հ ա մ ա ր կը նախընտրէ մեծ կենդանիներ, ինչպէս՝ եղնիկները, այծերը...

Աղուէսին համար տեսանելի գոյներն են՝ կապոյտն ու դեղինը:

Ինչպէս շուները, նոյնպէս ալ աղուէսները յատուկ կարողութիւն ունին հոտուըտալով ճանչնալու եւ վախի զգացում ունեցողը գիտնալու: Անոնք շատ զգայուն են նաեւ մարմնի լեզուի հասկացողութեան մէջ: